

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ


ԹԻԻ 18

15 ՅՈՒՆԻՍ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուր փճուել առաքնութիւնք	ԹԼԿԱՏԻՆՅԻՆ
Մեքէպարանոց գրուածքներք	ՅՈՎՀ. ԹԱԻՇԱՆՃԵԱՆ
Դպրոցական եռածեսութիւն	ՏՕԲԹ. Վ. ԹՈՐԴՈՄԵԱՆ
Զինքին տակ (ճամբու պատճառով. - Թարգմ)	ՄԻՍԱԲ ՄԵՄԱՐԵՆՅ
Տրամուրեան ծաղիկներ (Սիրերգ)	ՀՐ. Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
Ծաղկանոյց (»)	Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

Խմբագրական նօթք. — Զանազանք



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար տառտուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտատպան՝ 12 Զրանք կամ 5 բուլլի: Թղթատարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ նապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Զեռ-Բէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) فنيه سي اداره سي

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաւոր թիւ

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր ըմպելին դարձած է, այնքան բաղմամբիւ տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լուր ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն մասնք նշանաւոր են իբր Եւրոպական եւ քաղցրաբոյր, մասնք ու թէեւ նոյնքան ախորժելի համ ու հոտ լունին, գերազանց են սակայն իբր կաշուերիլ եւ զօրացուցիլ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունի որոնք զինքը կը զանազանեն ուրիշ տեսակներէ:

Սակայն կալ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համ, հոտ եւ մանաւանդ կաշուերիլ եւ զօրացուցիլ ան զուգական աղդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաքոնի բիւր, որ այդ յատկութեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Եւրոպական եւ Իսպանական բիւրի մեծ վաճառատունը, իր բաղմամբիւ յաճախորդաց խառնուրդին մը մասնաւորապէս համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճաքոնական զուտ թէյ մասնաւոր եւ զեղծիկ աւափերով ու կը հրաւիրէ օգտուել այս առիթէն բոլոր մասնք, որ կը փոփաքին ունենալ թէյ մը

Համով հոտով, առողջապահիկ եւ կազդուրելի:

Սոյն վաճառատուն մէջ կան նաեւ նշուական, չինական, Սէյլան եւ ծովային մեծ նաւա տեսակ թէյեր:

Ուստի թիւն մարգարի

8 - 10

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու է Կնեա-
աբան (gynécologue), Տօքթօր Էմիրզէ
որ 15 տարեկան գործունէութեամբը մեծ
համբաւ ստացած է, կը ծանուցանէ յոր-
գոյ յաճախողներուն թէ ընտելութեան
փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18:
Բաց ի վերայիցեալ իւր մասնագիտութենէ
կը բաժնէ նաեւ նորագոյն մէթոտներով
զղային եւ հագեկան ու երեւակայական
ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս
նէօրաթէնի եւ tic անուանուած ալքի
երեսի եւ օւտերու աղեղ եւ ակամայ
շարժումները եւ դաւաանի դադարումէ
յետք եկած զղային խռովումները եւ
երիտասարդական մալիքները, ինչպէս
նաեւ գինեմալիքը, մօրիֆնամալիքը եւայլն:
Հիրակիներէն զատ ամէն օր կէսօրէն
սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կը
դաւնի, եւ սուրբ օրերը ճիշդաբար կը
դարձան վկայեալ աղքատները: 8—10

Սինկիլի գեղարուեստական Կրդ Յու-
ցանանդէսը բայուած է Բերայի ընդհ. Տնո-
րէնութեան սրահներուն մէջ, Պօն-Մարշէի
դիմաց: Յուցանանդէսը ամէն օր բաց է և
մուտքը ազատ:

2. Տ. Ս. ՓԱՓՈՋԵԱՆԻ ԵՐԿՈՒ ԿԱՐԵՆՈՐ
հրատարակութիւնները. — Դործնական Բա-
ռարան (հայերէն անգլիէրէն) որ կը պա-
րունակէ 40,000է աւելի բաւեր, ասու-
թիւններ և ոճեր: Դին լաթակազմին՝ 35
ղր: — Նոյն հեղինակէն Չորեքեղանեան խօ-
սակցութիւն (հայ. գաղղ., անգլ., գերմ.)
բաժնուած երեք մասերով, բառագիրտու-
թիւն, խօսակցութիւններ, նամականի: —
Դին լաթակազմին՝ 13 զր: — Լարժարանաց
համար մասնաւոր զեղչ:

4—10

Հիւանդութեանց դէմ ապահով է եթէ իր մէջը չի գտնուի շիշ մը



SCOTT'S EMULSION

(ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՈՒՆ)

Թոքախտ, պրոնչիտ, հազ, հարբուխ և բարակեցաւ, և տղայոց անդամներու թուլութիւն, խոլ (սըրաճա) և բոլոր արեան տղեաններու համար անգին դարման մըն է. Լապչին անգամ առնուելով բժշկելու կ'ըսկսի և կը շարունակէ: Լմեն տարի հազարաւոր տղայք մահուանէ ազատելու կը ծառայէ: Հիւանդութիւններէ վերջը կորսուած զօրութիւնը կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը ետ կը բերէ և մարմնոյ կեանք կուտայ: Գեղերու մէջ նոր հրաշք մըն է, և ուտելիքներու նկատմամբ ալ հրաշք մըն է: Ս'իշտ վրան այս պատկերով վարդագոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Հիւանդութեան ամբողջութեամբ ընկալեալ է:

Բոլոր բեղաւորները և բեղաւորները կը ծախեն:

A LA BRODEUSE AU FIL D'OR



MARQUE

DÉPOSÉE

FONDÉE EN 1888

ԱՐԹԱՔԻ Ա. ԽՈՒՄԱՐԵԱՆ

(Ա Ս Ե Ղ Ն Ա Գ Ո Ր Մ)

Մեծ Շուկայ Գալփ սգեքլաւ Նուրի Օսմանի
Թիւ 5 եւ 11

Այս գոյք մը մեծ վաճառատանց մէջ կը գտնուի հին մթերք մը ունենալու տեղեկութեան հաւաքագրութեան հաւաքագրութեան վերաբերեալ նիւթերու, վերջին նորաձեւութեան համաձայն: Ա շեշտն կը համարուի տեղեկութեան հաւաքագրութեան ֆոթոգրաֆներու անհատական:

Բոլոր, գոտանէ, ֆոթոգր. շիշ. վաճառատան գլխաւոր տղաւորները կը ծախեն: D. M. C. Նիւթ մեծագոյն և քոթ, ֆիշի, ֆոթոգր. գոյքի եւ գոտանի բոլոր, կլապան, սըրաճ, փալ և քոթ եւալի. ինչպէս նաեւ քոթ, քոթ, և ասոյց վրայ կապարուած ձուլուալ տեղեկագրութեան, մեծ ու փոքր ծառայով:

Օժիճի համար կ'ընդունուին ունենալու յանձնարարութեան նորարարական տեղեկագրութեան ԲԱՌՅԻՄԵՌԻԻ հիւրէն դառ, այն երկու վաճառատանները կը հաւաքեն նաեւ ԹԻՅՍ ՏԱՅՄԸՆՏ ծառայութեան տեղեկագրութեան քոթագրութեան տեղեկագրութեան եւ արգելադրութեան ուրիշ տղաւորներ, իրաւունքն յարեւմտեան:

Ատեղեկագրութեան եւ պատգամի ունենալու համար տեղեկագրութեան մը միւս պատգամ կը գտնուի: Վարժարանայ գլխաւորներու համար տեղեկագրութեան ինչպէս արգելի բոլոր գիտելիքները գիտեցողները:

ՄԱՍԻՆ

55^ր ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 18

15 ՅՈՒԼԻՍ 1906

ՈՒՐ ՓՆՏՈՒԵԼ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆԸ

Կար ժամանակ որ տեղացի վաճառականը իր դրամական առաքումը Հալապ, Այնթապ ու դէպի ուրիշ շահակից քաղաքներ, հիմակուանին պէս փոխգորով՝ կամ ծրար կապած թղթատարին միջոցաւ չէր կատարեր:

Ան ատեն, պարզունակ ժամանակներ, խրկուելիքը հոգի ալ ըլլար, ջորեպանին կը յանձնուէր: Ջորեպան մը, է՛հ, ընդունեցէք թէ թաղիքի կտորուանքներով ծածկուած ալ երբեմն կերպասի կտոր մը կունենայ, որ կրնայ ինքնին գեղեցիկ ու թանկագին ըլլալ: Ջորեպանն ալ հաւատարիմ էր, անոր գլխուն վրայ երդում ընողներ ալ կային: Այն ժամանակներ, առուտուրի մարդն ալ ոսկի բարոյականով մը կը պարծենար:

Կարաւանի մը տէրը, անունը որոշ չի մնաց միտքս, Հալապ մեկնելու իր պատրաստութիւններուն մէջ, կարեւոր աւանդ մը կընդունի ծանօթ վաճառականէ մը, չորս հարիւր հատ չիլ ոսկի, կաշիէ ծրարով մը ապահովուած, ջորեպանը անինչին պիտի տանի, անինչ չափ լիար օճառի փոխարժէք մըն է, չորս հարիւր ոսկի, անգամ մըն ալ կրկնէի:

Ջորեպան թէ կարաւանապետ, ան օրը անմիջապէս, ամէն բան կարգին, հարիւրէ աւելի ջորիներու հարուստ կարաւանով մը ճամբայ կրնայ. իրենն է ամէն չունչ ունեցող կենդանի, ու դեռ իր ձեռքին տակ՝ կենդանիները հոգալու համար, մէկէ աւելի ծառաներու չարքաշ, հաւատարիմ խումբ մըն ալ կը պահէ, որ տարիներէ ի վեր աս լեռնականին անձին ջորիներուն հետ անոր ծնած կնկան զաւկներուն անուններն ալ սերտած ու սովորած ըլլալու չափ մտերիմ

ընտանութիւն մը մշակեր են: Ջորեպանն ասոնց հետ օրուան մը, երկու օրուան ճամբայ, հեռացած ըլլալու յոգնութենէն ընկճած, տեղ մը, չեմ յիշեր ո՛ր տեղ, դադար ընելու պէտք մը կըզգայ, ջորիները կը համրէ, հակերն ու մարդիկը կը համրէ ու կը դառնայ որ ձեռք մըն ալ, ապահովուելու համար, դրամի ծրարին երկնցնէ, որ սակայն... Հիմա, որո՞ւ մասին յարմար կըլլայ կասկածիլ, երբ կորսուածը խոտի պէս կեր մը չէ, ջորիները ոսկի չեն կրնար ծամել, թէեւ մուկին համար ըսուած ալ ըլլայ որ անօթի ատենը երկաթը կրծեր է: Մարդը, այո՛, ջորեպանն ալ մարդ, երկար փնտռուքներէ յոգնած ա՛լ էս, ու յուսահատ, խելացի գլու մը ըրածի պէս, անգամ մըն ալ ան իր երկրորդականներուն վրայ կը կատարէ քննութեան մը մանրախոյզ տեսակը, անոնց մէկ քանիին քիթէն բերնէն արիւն բերելու աստիճան ձեռք մըն ալ կը քաշէ, բայց աւա՛ղ. կորսուածը դրամ ըլլայ ու բանուկ ճամբու մը մէջ, ինչպէս է այն մեծ քաղաքը տանող ճամբան, ուր կրնայ ուղտ մըն ալ կորսուիլ ու չի գտնուիլ բնաւ, ա՛լ կարելի՛ բան է որ, հոնկէ՝ այն ճամբուն երկայնքէն ոսկիի ծրար մը անգամ մըն ալ իր տեղը դառնայ: Մառանները երդում պատառ կըլլան, կը կրկնեն միշտ կը կրկնեն որ իրենք բան մը չեն գիտեր, երդում որ՝ իրենք այն տեսակ աւանդի մը կայութենէն ալ չունին տեղեկութիւն: Ընկէպը այս փորձերուն արդիւնքէն ալ յուսահատ, բա՛ւր Աստու դատաստանին կը յանձնէ ու ճամբան կը շարունակէ միշտ տրտում ու կթոտ ծունկերով, որ հարկ է չորս հարիւր ոսկիի գումարը մը կորսնցնողին:

վիճակը պիտի ըլլայ, երբ սա մանաւանդ գիտէ ու կը գուշակէ որ այդ ճամբան զինք ուղղակի գէշ գահալէժի մը կ'առաջնորդէ, ետ դառնալ կամ փախ տալ դի մը դուրս՝ հետք կորսնցնելու համար, ատոր հետեւանքն աւելի գէշ, աւելի փորձանքոտ: Կեանքին մէջ առաջին անգամն է որ գլխիկոր ու տրորուած վիճակի մէջ դէպի այն քաղաքը՝ մուտք մը կընէ:

Վաճառականը՝ տեղացի պատուաւոր դէմք մը՝ իր մեկնած տեղէն նախապէս տրուած լուրի մը համաձայն, ջորեպանը անմիջապէս առջեւը բերելով՝ ծրարին պահանջը կընէ, վերջինը օձիք ազատելու ճարը չի գտներ. կարճ ըսելու համար, խնդիրը դատարան կիյնայ, կը հասկցուի որ ծրարը գողցուած չէ ջորեպանէն. թէև այս կէտը շատ ոշոշ է, բայց ատով չի լմնար բանը, երկու կողմէն արդարութեան վճիռին կըսպասեն, ու դատը վերջապէս վաճառականը կը շահի: Աշխարհք ալ արդէն աս տեսակ հետեւանքի մը կըսպասէր:

Երեւակայել հիմա միւսին թաւալգլոր անկումը դէպի ուր որ խորութիւն մըն է, Կուտայ ինչ որ ունի, ջորինքը, ամբողջն ալ, ու նոյն իսկ տարիներու ընթացքով չինած անունն ալ. գէշ երազ մը կ'անցընէ, ձեռքին տակ միայն խեղճ իշուկ մը պահելով: Ձէլէպը անկէ վերջ, անցած կըլլայ երկու երեք տարի՝ իր ան մէկհատիկին հետ՝ մտերիմ ուղեկից մը, անգամ մըն ալ խորքերդ ու ճիւղ նորէն նոյն խանը կուգայ կիջնայ, ուսկէ տարիներ առաջ մեկնելու ատենը, հարիւրէ աւելի բոժոժակիր ջորինք իր ետեւէն առջեւէն իր հանրածանօթ կարաւանապետի պերճանքը կը հնչեցնէին:

Նոյն խանը կիջնայ, խանճին ալ անմեռ, անփոփոխ նոյն գգըլիկ մարդն է տակաւին, որ իր պայտառի մուրճը ձեռքը թի՛ք, թա՛ք, թի՛ք, թա՛ք, պզտիկ պզտիկ դամբը մը կը ծայրացնէ ու ոչ ուրիշ կողմ մը՝ չեշտ իր գամին, իր միայն գործին կը նայի: Ի՞նչպէս ես, ուստա ճա՛ն, աղէ՛կ ես, տի՛նճ ես, կըսէ աս նորեկը Մարգարին, եսեանին,

իշուորին բարեւ չեն տար, հալ խաթրը չեն հարցներ, հա՛ խուզում. է՛հ, պու տէ կէշէր:

Մերուկ պայտառ մը, այն մէկը սովորական ճամբորդի մը պէս ներս առնելու պահուն, անոր ովը ճանչնալու համար, ոչ պէտք ունեցեր էր արդէն, ոչ ալ ժամանակ ունէր, մէյ մը սանկ դէպի այն կողմը քըննող աչք մը պտտցնելով, հը՛մ, հա՛, վա՛յ, ճանչցայ, ճանչցա՛յ, դուն Գ. ը չե՛ս, ի՛նչպէս չեմ ճանչնար, բայց աս ի՛նչ հալ, աս ի՛նչ փէշկ. աս ի՛նչ փէրիշանութիւն:

— Մի՛ հարցներ, Մարգա՛ր, հալ փէշկ մի՛ հարցնէր:

— Ես ծերացեր եմ ամմա, Գ. աղա, դուն ինձմէ ալ ծեր, ինձմէ ալ ճերմկած:

— Ձէ՛ որ, վարպե՛տ, աշխարհի՛ վրայ ջորեպանին քաշածը չունը չի քաշեր՝ ըսեր են, իմ չի մեռնիլ ու ողջ մնալս հրաշք հասկցիր:

— Ջորինքդ ո՛ւր են, դուն ո՛ւր մնացիր, որ ալ հէ՛լ չէրվըցիր աս սէմթերը:

Գ. աղան երկար ծխամորճի մը բերանը Մարգարէն հրամցուած հաստիկէ սիկառ մը բռնկցնելով, երեք տարիներու հալ քէյֆի-եթ մը կը պատմէ: Երկար, հետաքրքրող ողբսական մը, բուն իսկ ողբսեւսի իր բերնովը ու որքա՛ն շահեկան:

Այդ տեսակ պատմութեան մը խորագիրը կ'անդրադառնայիք անշուշտ թէ՛ չորս հարիւր ոսկին պիտի ըլլար նախ, վերջամասն ալ բնականաբար ան բրդոտ գլուխով խեղճ իշուկը, որ կրիայի մը ռոքերովը հեշտ իսկ զառիվելո՛ւ՝ հանդիպելուն անպատճառ իր տիրոջը գլխութեանը կ'ապաւինի եղեր:

«Բայց հոգ ընել չըլլիր, աղա՛, Աստուած մեծ է, աս իրկուն մերը երթանք, կըսէ Մարգար իր աս երկար առենէ ի վեր կորսուած միւշտիւրիին, խանը չի կեցուիր, ցուրտ է, աւանակը հոս, դուն ալ մերը, ու մնացածը գլխիդ անցած դարձածներուն, հոն վերջացուր» կ'աւելցնէ:

Մարգարին երբեմնի յաճախորդը հրաւերը չի մերժեր, իրկունը մէկտեղ տուն կերթան, նեղկիկ բոյն մըն է տունը, է՛հ, Մարգար

ինքն ու իր կնիկն ալ պզտիկ են մարմնով : Յուրտ իրկուն մը , ձմեռ . տաքնալու կամ ան եկողը մանաւանդ տաքցնելու համար տան խաթունը օճախին մէջ քիչ մըն ալ ածուխ կը հրարցնէ : Բարի եկիրի փոխանակութիւնները էն առաջ լմնցած՝ Մարգար տունին արարողութիւնն ալ տեղն ու տեղը պահելու իր սովորամօլ քաղքենիութիւնովը , հիմա անգամ մըն ալ հիւրին խօշ պէշը կը հարցնէ . « աս վերջինն ալ իր ցորեկի պատմածներուն նմանող անգամ մըն ալ կը յիշէ բաներ մը - « մինակ փէշէնկս , Մարգար , մինակ փէշէնկս⁽¹⁾ » Զորիս երսուն ոսկի կ'արժէր , անոր ուղածիս պէս կազմած մը չիտկելու հավէտով , գիտնայիր մէյ մը թէ ի՞նչ քաշեր եմ , ի՞նչչափ դրամ վատնած : Դիւտուն հայեկին , գլխուն ու կուրծքին բոլոր զարդական մասերը՝ հեշտ չէին գտնուիր , ծիծեռ⁽²⁾ զարդերը Գ . Հիսարէն , մնացածն ալ հաւանը⁽³⁾ և ուրիշ փոքր բոժոժիկները Այնթապէն բերել տուեր եմ : Երկու երեք տարի է որ քուն մտած չէ աչքս . երեք չեմ կըրնար քնանալ եւ այս անոր համար որ փէշէնկս չի կայ , անսիրտ թիւճճարը գոնէ ան մէկը ինծի թողուր . անոր վրան գլուխը՝ ամէն մէկ բոժոժ մէյմէկ ձայն ունէր , ես անոնց ձայներովը քուն կըլլայի : Այստեղ , մարդիկ , աղջկաց ձայնին հետ ջուրին ու ոսկիին ձայներուն խենթցեր են , բայց բնաւ չեն խորհած թէ՛ այն ձայներէն շատ աւելի գեղեցիկ , շատ աւելի հիանալի՝ ան է որ փէշէնկի մը քովէն քնարէն կը լսուի , ա՛խ , վարպետ ճա՛ն , ամէն միտքս իյնալուն , մուխ կեցլայ գլուխէս . « էքմէկըն կէօզըմ քէօռ էթսուն » որ սուտ չեմ ըսեր , կնիկս ալ մեռնէր , տղաս ալ մեռնէր , այնքան ցաւ չէի ըներ : Գնաց , ամէն բան գնաց , փէշէնկս . հատ մը հարիւրնե-րու մէջ՝ լեռ բեռցուէր կռնակը ըհ չէր ըսեր . երկու օր անօթի ալ միար , ան նորէն չէր

քվքվար⁽¹⁾ ու միշտ աժտահարի մը ուժովը կ'առաջնորդէր միւսներուն , միշտ ճակատը , միշտ առաջը կարաւանին : Իմ լեզուէս կը հասկնար , իմ ձայնս կը ճանչնար , դեռ մէկ տարուան մը մէջ՝ սիրուած տղու մը պէս եղաւ ինծի . բնաւ այպ , բնաւ այպանք . դուն ալ չե՛ս յիշեր , վարպետ , վեց—եօթը տարիներու մէջ փէշով փարա վաստկուց ան ինծի : Իրաւ , անոր հետ ուրիշներ ալ կային , ինչպէս անուններն ալ չեմ մոռցած տակաւին , խանճէն⁽²⁾ , կուլօն , խարախըղը , կէվրէն , խաղէն , խընճէն , ասոնք ալ կային բայց ուրիշ էր փէշէնկս » :

Մարգար ականջը կախ ու մարդավարի համբերութիւնով մօտիկ ընելէ յետոյ իր հիւրին աս արցունքոտ ախվախին կամ լեռնցի պարզուկ հովուներգութեանը , էն վերջին վանկին ու յանգին , ինքն ալ միշտ նոյն մխիթարող խօսքերը կը յանգաւորէ - « Աստուած մեծ է՝ աղա՛ , հոգ ընել չըլլիր . խօշ մալը դուն վաստկեր ես , մալը քեզ չէ վաստկեր , չուքր ըրէ որ ձեռքէ ելածները Զորիի պէս ճանաւարներ եղեր են , ճան՝ ասըլ սէնին ճանըն տըր » : Հիմա՛ հաց ուտենք , կըսէ , ու սեղանի կը նստին : Ճանտիրոջ երկու պզտիկներն ալ ոչ այնքան ուտելու քան որչափ ան օտարականին մօտէն հետաքրքրուելու համար , սեղանին շուրջը իրենց տեղերը կ'ունենան : Բարի , ժպտուն մարդ մը կը տեսնեն զայն , որ ամէն դգալը բերանը տանելուն իրենց կը նայի . ո՛վ գիտէ , ի՞նչ կը մտածէ . լեռնցիները խորունկ յարգանք մը կը տածեն արհեստաւորին ու անոր պարագաներուն հանդէպ :

ԹԼԼԱՍԻՆՅԻՆ

(Յ. ՅԱՐԻԹԻՆԵԱՆ)

(Յաջորդով)

(1) Խրխնջելու տեսակ մը :

(2) Լեռնցի աղջկաց անուններ , որ Զորիսներուն յարմարցուցեր են :

(1) Կարաւանին առաջնորդ Զորին :

(2) Ծովեզրերէ հաւաքուած խղունջի տեսակ մը :

(3) Զորիներուն ինչպէս նաև ուղտերուն կուշտէն կախուած մեծ զնկպնկոցը :

“ՄԵՐԿԱՊԱՐԱՆՈՑ” ԳՐՈՒԱԾՔՆԵՐԸ

(ՆԱՄԱԿ ՍՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ)

ՅԱՐԳՈՂ 17 ՅՈՒՆԻՍ 1906

Յարգոյ խմբագիր Մասիսի

Երկու ամիսի չափ առաջ Նիւ-Եօրքէն մեկնած ըլլալով, թերթերը կարդալու պատենութիւն ունեցած չեմ: Մերկապարանոց հրատարակութիւններու մասին գրածիս իբր պատասխան՝ Իզմիրցի քրոնիկագրին մէկ գրութիւնը միայն տեսայ. թերեւս ուրիշներ ալ գրած է: Աշխատեալ է խնդիրը անձնականի վերածել: Դիտեցէք եւ պիտի տեսնէք որ ասի փաստ չունեցողներուն ամենէն զօրաւոր զէնքն է: Եթէ խնդիրը շատ կարեւոր չըլլար եւ անգամ մը որ մէջտեղ նետուեցաւ, գէթ մինչեւ աստիճան մը լուծուելուն հարկ չի տեսնէի, ապահովաբար նորէն գրելու չէի փորձուեր: Բաներ կան որ ոմանց կը վայլեն եւ սակայն ուրիշներու չեն վայլեր: Կը վստահացնեմ ուրեմն ամէն այն սիրելի ազգայինները, որոնք շարունակ կը հարցնեն ինծի թէ արդեօք կը ճանչնամ այն մարդը որու հետ գործ ունիմ այս խնդրոյն առթիւ, թէ չեմ ճանչնար. բայց ճանչալու ալ պէտք չի կայ, քանի որ ես մարդուն անձին հետ գործ չունիմ բնաւ: Որքան դիւրին է ծաղրել, անուանարկել, կատակել եւ հայհոյել. ամենէն անուս, ամենէն տգէտ, ամենէն անկիրթ, ամէնէն կոշտ, ամէնէն լիրբ մարդիկ անգամ դիւրաւ կարող են նոյն ոճով պատասխանել: Եթէ ընթերցողներուն մէջ կան դատողութենէ զուրկ այնպիսի մարդիկ որ կը կարծեն թէ յաղթանակ տարած կ'ըլլայ մէկը՝ այդպիսի ոճ մը գործածելով (եւ զանազան վիճաբանութեանց առթիւ, գերուածները կարդալով շատ անգամ մտածած եմ որ գտնուելու են այդպիսիներ մեր մէջ) գրեմ մէկ քանի բաներ որոնք բոլորովին անտեղի եւ անվայել են, ասով միայն ապացուցանելու համար որ բնաւ տեղի չիկայ այս կարգի ստորնութեանց զիջանելու:

Օրինակ Ա. «Բիւամբօները եւ ճնճղուկի գլուխը»:

Քեռորդիս չէ, հապա Տօք. Արշակունի՛ որ պատմեց ինծի հետեւեալը: Կիրակի օր եկեղեցի գացած էի. քովս ոչ-լուսաւորական պարօն մը կեցած էր, հարցուց ինծի ծաղրական ոճով մը. «Եպիսկոպոսին ձեռքի ծռած գլուխով զաւազանը ինչ կը նշանակէ»: Պատասխանեցի.— «Միեւնոյն բանը ինչ որ կը նշանակէ խաղերու վճիճակին տիրոջ ձեռքը գոնուած զաւաղանը: Երբ մէկ հատը՝ քեզի պէս ճամբէն կը խոտորի, վզէն անցուցածին պէս՝ կարգի կը բերէ զայն»:

Ամէն անգամ որ Իզմիրցի քրոնիկագրին մէկ գրածը կ'արգամ, Տօք. Արշակունիի յիշած կենդանին միտքս կուգայ, եւ իբր բարի քաղաքացի մը, երբ ճամբէն խոտորի՝ վզին կ'անցընեմ զաւաղանս, փոյթ չէ թէ ցաւէն՝ ճնճղուկի գլխէն քրքիշներ արձակել տալու պատճառ տուած ըլլամ, քրքիշներ որոնց սլաք անունը կուտան, նոյնքան ճնճղուկի գլխու տէր ուրիշ գրողներ:

Սիրուն է, տկարամիտ ընթերցող: Քեզի համար թերեւս, բայց ինծի համար այսպիսի պատասխան մը տալը ստորնանալ է, դիմացինիդ հաւաստիլ է:

Օրինակ Բ. «Իւսկիւտարցի Պէռանժէն»:
Ճշմարտութիւնը յարգելու համար, պէտք է ընդունիմ որ Պէռանժէին ո՛վ ըլլալը չեմ գիտեր. բայց սա գիտեմ թէ Իզմիրի Տօնքիշօթը այլեւս վախ չպիտի ազդէ տկարակազմ զրադէականներու: Տեսան որ իր սլաքները այնքան վիրաւորիչ եւ մահացու չեն որքան երեւակայներ էին ցարդ: Այլիս ո՛չ ոք պիտի վախնայ իրմէ եւ համարձակ պիտի խօսին իր մասին մտածածին. ասի մեծ յաջողութիւն մըն է ինծի համար, քանի որ օգնականներ պիտի ունենամ դատապարտելու լկտի գրութիւնները:

Այս օրինակը թէև ոչ շատ մեղադրելի, բայց նորէն քաղաքավար ըլլալէ հետո է, և չնօրհնով մարդու մը համար՝ ոչ բոլորովին վայելուչ:

Օրինակ Դ. «Շատ ստորնացուցիչ բան պիտի ըլլար... ճիճիմի վաճառականի մը հետ վիճաբանիլ»:

Բարիդ հասնելէս ի վեր տեսած ազգայիններս ինծի կ'ըսեն. — «Դիտե՞ս ով է, կը ճանչնա՞ս այդ իզմիրցիներու հետ կը վիճաբանիս. եթէ մինչև իսկ հետոէն տեսած ըլլայիր զինքը, այլեւս անունը անգամ բերանդ չէիր առներ»: Կը մոռնան խեղճերը որ ես իրաւէն անունը բերանս առած չունիմ. նոյնպէս կը մոռնան որ ես իրեն հետ վիճաբանած չունիմ. ինքն է որ ինծի հետ կըռուիլ կ'ուզէ, սկզբունքը թողլով անձնականութեան մէջ խեղդելու համար բարոյականի մաքուր ձայնը և անոր դատը: Ապահովաբար եթէ մէկու մը հետ վիճաբանիլ ուզէի, պիտի ջանայի այնպիսի մէկը ընտրել որու հետ տեսնուիլը ինծի պատիւ բերէր, և ոչ հակառակը, որու հետ մենամարտիլս տեսնողը զիս մեղադրելու իրաւունք չունենար, ըսելով. «Ինչո՞ւ քու հասակը մէկը չես ընտրած. այդ գաճաճին հետ բռնուիլդ և անոր յաղթելդ պատիւ մը չէ»: Կ'ապահովցնեմ իմ բարեկամներս որ անձնական նկատում բնաւ չի կայ գործին մէջ, ապա թէ ոչ ինքզինքս չըստորնացնելու երկիւլս միայն բաւական պիտի ըլլար՝ իզմիրցի ազատութեան շուտուածին հետոէն անգամ բարեւ չի տալու համար:

Աղւո՞ր է, անաղնիւ ընթերցողս: Ի՞նչի համար թերեւս, բայց ինծի համար պայապի մարդու ոճ է, թող ըլլայ ճշմարիտ: Ամէն ճշմարիտ բան անպատճառ ըսելու հարկ չի կայ:

Օրինակ Դ. «Աստուծոյ վեր խիղճս կայ»...:

Օ՛հ! օ՛հ! խիղճ ալ ունի եղեր! Ի՞նչ գոյն է արդեօք:

Ի՛հ. կը բաւէ այսքանը: Ամբողջ կե. նացս մէջ այսքան հայհոյութիւն ըրած չէի: Որ և է գործի մարդ, որքան ալ անկարող մէկը ըլլայ, կրնայ այսպիսի գրութեանց

շարք մը ստեղծել, և եթէ բան մը կ'արժեն ասոնք, շատ աժանի ծախել այս սրամտութիւնները. և սակայն՝ հակառակ նոյն աժանութեան՝ դիւրաւ արտադրել այնքան մեծաքանակ, որ քիչ ատենուան մէջ մեծ հարստութեան մը տիրանայ: Գրական հրապարակի վրայ ասոնք սրամտութիւն կը կոչուին թերեւս ոմանց համար, բայց առողջ բարոյականի տէր մարդոց համար ասոնք պարզապէս, անարժան և անարժէք, ստորնութեան ապացոյցներ են:

* *

Կ'արժէ սակայն որ բուն խնդրոյն վրայ մէկ երկու տող գրեմ: Ես դիւրաւ չեմ յուսահատիր և ձեռք առած գործս յաջողցնել կը սիրեմ: Արդարութիւն և Աստուած իմ կողմս, միշտ յաղթող կ'ըլլանք՝ եթէ նոյն իսկ բազմաթիւ ընթերցողներ հակառակ կենան մեզի այս բանավէճին մէջ:

Պիտի տեսնէ պարոնը որ Մայր վարժարան մը շինելէն շատ աւելի դիւրին գործ է այդպիսի ազատ հիմերու վրայ հաստատուած գրականութիւն մը դադրեցնելը: Համբաւին դպելու ամենափոքր պատճառ մը չունիմ, արհեստակից ալ չենք որ նախանձութիւն ենթադրուի: Ամէն մարդ ազատ է պատուաւոր ապրուստ մը ճարելու, չի կայ արհեստ մը կամ արուեստ մը որ մեղադրելի ըլլայ, կը բաւէ որ պարկեշտութեան սահմաններուն մէջ գործադրուի: Ներեցէք որ ըսեմ թէ վերջին ծայր ազայական է մտածել որ ես գրիչ մը կոտրել ուզեմ, կամ գրելէ դադրեցնել ուզեմ: Ո՛չ, ո՛չ, ինքը շատ լուր գիտէ թէ իմ ուղածս այդ գրչին աղօտս արագութեամբ զսպել փափաքիլ է միայն: Թո՛ղ մաքուր գրէ և փոխանակ չորսի՝ չորս հազար էջ գրէ. ոչ ոք պիտի հակառակի: Իսկ հազար սրամտութիւն, միլիոն մը բացատրութիւն, չպիտի մեղմեն այն անամօթ, կոպիտ և լկտի բացատրութիւնները որոնցմով կը զարդաւ երբեմն իր գրածները: Միամիտին մէկը ուզեր է որ մատնանի ընեմ թէ որո՞նք են ասոնք, ես այդ գրուածները իմ բարեկամ այր մարդոց անգամ չեմ կարդար, ո՛ւր մնաց որ ձեռքովս

ալ գրեմ եւ անգամ մըն ալ հրատարակութիւն տամ անոնց։ Այսքան բարոյասէր ես։ Այո՛, պարոն, այսքան բարոյասէր եմ, ի՞նչ կայ որ։ Դուն այդքան անբարոյական ըլլալուդ համար չես ամաչեր, ես ի՞նչու ամաչեմ թէ բարոյասէր եմ։ Մարդուկին մէկն ալ զիս համոզելու ելեր է որ Նիւ-Եորքի մէջ աւելի անբարոյականութիւն կայ, քան մերիններուն մէջ։ Ծառը իր պտուղէն դատել սովորած ենք։ Կրնա՞ք ցցնել ինծի Նիւ-Եորք հրատարակուած որ եւ է պատուաւոր թերթ, որ համարձակի հրատարակել այդ աղտոտ գրութիւններէն մէկին թարգմանութիւնը նոյնութեամբ։ Ո՛չ, քանի որ այդ նոյն թերթերը շատ աւելի պակաս աղտոտ խօսքեր իսկ չեն հրատարակեր եւ միայն կ'ըսեն «անցագրեի խօսքեր ըրաւ վկան»։ Իմ գրածներս անքնադատելի չեն, բայց պիտի ուզէի որ զանոնք քննադատողները գիտնային որ մէկ վայրկեանի յախուռն մտածմամբ չեն գրուած անոնք, հապա տարիներով խնդիր մը ուսումնասիրելէ ետքը կը համարձակիմ խօսիլ կամ գրել։ Այս է պատճառը որ որոշ կը խօսիմ. դարձուածքներ, ձեւեր չի կան իմ գրածիս մէջ։ Կրնամ սխալած ըլլալ, բայց ոչ այնքան որ գրիչը ձեռքը առնողը, առանց իսկ մտածելու, մէկ վայրկեանի մէջ սխալը գտնէ։

Ամերիկայի մէջ «սուտ կը խօսիս» ըսելը, ամէնէն մեծ թշնամանքներէն մէկն է զոր կրնաս դիմացինիդ ընել։ Ես չեմ ըսեր ուրեմն թէ չեմ հաւատար, բայց կուզեմ գիտնալ անունները անոնց՝ որոնք ինէ «չատ աւելի հմուտ, շատ աւելի պարկեշտ(ը), շատ աւելի հարուստ, շատ աւելի զարգացած» մարդիկ ըլլալով հանդերձ, «քաջալերած եւ խրախուսած են զինքը բռնած ճամբուն մէջ»։ Հրատարակէ՛ թող պարոնը իր այս նշանաւոր բարեկամներուն անունները։ Ընթերցողներու ստուար թիւ մը հետաքրքիր է իմանալու թէ որոնք են այս մեծ կարծուած անձնաւորութիւնները, որոնք՝ հակառակ իրենց մեծութեան՝ հանրային բարոյականի պահպանումը անկարելիոր բան մը նկատած են աղտոտ գրութիւնների եւ պատմութիւնների

իմանալու համար իրենց ունեցած անպատուաբեր ճաշակին դոհացում տալու փափաքին քով։ Պարոնը կուզէ հաւատացնել թէ անբարոյական բան մը գրած չէ բնաւ. եթէ իրաւէն այդպէս կը հաւատայ, ուրեմն իր այս մեծ բարեկամներուն անունները հրատարակելու համար քաջաւելիք մը չունի։ Ես կը հաւատամ որ իմ դատիս մեծ պաշտպանութիւն մը ըրած պիտի ըլլամ, երբ ունենամ այս անձնաւորութեանց անունները, վասն զի աներկբայ եմ որ եթէ իրաւէն ինէ, ոչ միայն աւելի, հապա քիչ մըն ալ պակաս՝ պարկեշտ մարդիկ են, այն առեւ, կամ բոլորովին պիտի ուրանան քաջալերած ըլլալին, եւ կամ պիտի բացատրեն թէ լեզուն էր որու հաւնած էին՝ այսպէսնով հանդերձ տգեղ եւ անաւթ լիտիութիւնները, այսինքն ճիշդ իմ ըսածս պիտի ըսէին։ Օն, ուրեմն, տուէ՛ք մեզի անունները այս անձնաւորութեան քիւնքերուն եւ կամ, «այդպէս մեծ մեծ մի՛ջարդէք», որպէս ըսած էիք անգամ մը ինծի, բոլորովին անիրաւ տեղը։ Կարգը քանի որ եկաւ՝ ըսեմ թէ այդ առթիւ երկու հարուստ մարդոց անուններ տուած էիք. անոնց միոյն հետ հոս տեսնուած ատենս ըսի իրեն. — «Եթէ ձենէ ամէն ուղողին եւ ուղածին չափովը տաք, դուք մէկ տարուան մէջ կը սնանկանաք»։ Առաջին տեսակցութեան մը մէջ, երրորդի մը եւս ներկայութեան, այսպիսի որոշ բառերու առջեւ վայրկեան մը վարանած մնալէ ետքը հարցոց, «Ի՞նչ ըսել կուզէք»։ — «Չէ՛ մի որ տարուան մը չըջանին մէջ ձեր հարստութեան կրկինը կամ եռապատիկը ներկայացնող գումար մը կը կազմեն ամէն կողմէ բարեգործական կը թափարական նպատակներով ձեզի եղած դրամական օգնութեան կամ նպատակի խնդրանքները»։ — «Ի՞նչ ի՞նչն գիտէք այդ բանը»։

«Անձնական փորձառութեամբ»։ — Ասոր վրայ բերանը բացաւ եւ սկսաւ նկարագրել. կը տեսնէք, պարոն, որ չափազանց ածապարեր էք զիս մեծախօս կարծելով։ Միւս յիշած անուննիդ ալ նոյն բանը պիտի ըսէ ապահովապէս։ Այս անգամ հաւատացէ՛ք։

Անհաւատալի անմեղութեամբ մը Իզմիրցի քրոնիկագիրը կ'ըսէ. «Երբեք զգացած չեմ թէ անպարկեշտ բան մը կ'ընեմ երբ կը նկարագրեմ մերկ... եւլն...» Կը նկարագրեմ, ո՞վ է նկարագրութեան հակառակողը: Դժագրիչներ՝ գեղարուեստի սիրոյն համար միայն, Աստուծոյ արարչագործութեան մէջ ամէնէն գեղեցիկ բանը կը գծեն, կ'ինը, բոլորովին մերկ, շատ պարզեցեց դիւքն մը մեզ, սակայն, և կը դնեն նկարը ի տես ժողովրդեան՝ հասարակաց թանգարաններու մէջ: Անոր վրայ նայելով ոչ ոք կը գայթակղի: Բայց անդին ոչ թէ բոլորովին մերկ, հապա երեք չորրորդը թերեւս հագուած պատկեր մը կայ զոր կառավարութիւնը՝ իբր անպարկեշտ բան մը՝ կը գրաւէ և անշուշտ իրաւամբ անհա, այս է որ կ'ընէ պարոնը և որու համար է որ կը գրեմ, զոր անաթոթ, լիբը և լկտի կը կոչեմ, քանզի այս երեք բառերը բուն ասոր համար հնարուած են: Սէ'րը, ո՞վ չունի սէր: Աստուած սէր է: Համբոյրը ո՞վ գէշ բանի տեղ կը դնէ: «Սուրբ համբոյրով զիրար համբուրեցէք» կ'ըսէ Առաքեալը: Դրագէտներուն մենաշնորհը չէ սէրը կամ համբոյրը: Կը յուսամ որ իրմէ զատ ուրիշ ամէն գրագէտ պիտի փութայ բացատրելու թէ մաքուր սէրը՝ մաքուր համբոյրն է որու սիրահար են իրենք և ոչ միւս տեսակը զոր... այսպէս կէտերով զարդարուած անպարկեշտ դիրքերու կը վերածէ, ինչպէս Տգեղ գրեթէ «ալով» գծող մը անպարկեշտ պատկեր մը կ'արտադրէ: Այն անմեղ երեւոյթ ունեցող կէտերը! Կատարեալ անաթոթ մը ըլլալու պէտք չունի մարդ սակայն, անոնց նշանակութիւնը հասկնալու համար Կարգ մը հեղինակներու անուններ յիշեր է, չեմ գիտեր որ ինչ բաղդատութիւն կայ անոնց գրածներուն և իրեններուն միջև: Եթէ Café chantantներու երգերուն և կամ աժան, բաղտոտ մանրավէպերու հեղինակներուն հետ բաղդատէր իր գրածները, (որոնցմէ թերեւս կը թարգմանէ մէկ մասը) կը հասկնայի: «Կրնամ պնդել թէ ըրած գրականութիւնս ոչինչ ունի իր մէջ այսպանութիւն» իր ըսելովը չըլլար, երբ-տայ մազի իր մեծ

բարեկամներուն անունները, այն ատեն ապացուցած կ'ըլլայ ըսածը: Յետոյ նորէն կը տեսնուինք:

Դալով աւելի օգտակար կէտի մը, առաջին բարոյական դասը որ տուած է դեռ, սա է՝ մեղադրել այն բարոյախօս մարդիկը որոնք իր Գահիրէաքնակ հարուստ կալուածատէրին նման, անբարոյական արարքներու մէջ կը գտնուին, քորջը աղջիկը, քենին կամ ուրիշ ու եւ կ'իմ մը՝ իրենց բուն կնոջ հետ չփութելով: Աստեք մասնաւորներու բարքեր են զորոնք մեղադրելու ենք, ձաղկելու ենք և այսպանելու ենք ամէն միջոցներով: Ամէն ազգի մէջ այսպիսի աղտոտ մարդիկ կան: Մեր խնդրոյ նիւթ ըրած բանը սակայն հանրային բարոյականն է, այսինքն՝ ընողը գոնէ ամաչէ հանրութեան առաջ եւս իր ըրածներուն վրայ խօսելու: Թէև հանրութիւնը անհատներէ կը կազմուի, կայ սակայն հանրային բարոյական մը՝ որ տարբեր է անհատական բարոյականէն:

Չի՞ հաւատար պարոնը, որ հակալքութեան պայքարը օգտակար եղաւ, լա՛ւ. մերկապարանոց գրութեանց դէմ բացուած պայքարը ապահովաբար արդիւնաւոր պիտի ըլլայ: Փաստ կ'ո՞ւղէք, ասկից աւելի զօրաւոր ինչ փաստ: Հակառակ սա խօսքերուն թէ, «այդպէս մէկ երկու յօդուածով չէ որ իմ սիրած գրականութեան» (աղտոտ ըսել կ'ուղէ) պիտի կրնայ վազ անցնիլ տալ զիս Պ. Թաւանձեան», ես կ'ապահովեմ զինքը որ եթէ ինքզինքը քննէ՝ պիտի տեսնէ որ գրիչը եթէ ուղէ, միտքը եթէ թելադրէ, բերնին ջուրերը եթէ վաղեն, տակաւին բան մը կ'ասեցնէ պիտի այլեւս իր ձեռքը և չպիտի գրէ այն բառերը այնքան լկտի ոճով՝ որպէս յառաջագոյն կ'ընէր: Ինչպէ՞ս կը համարձակիմ գրել այս տողերը, ասի շատ դժուար չէ գուշակել, հրապարակաւ գրուած են անհա, և ընթերցողները դատաւոր կրնան ըլլալ: Այսօր միայն այսքան՝ այս մասին. Իւսկիւտար և Նիւ-Եօքը իրարմէ այնքան հեռու չեն որքան կը կարծէ Իզմիրցի քրոնիկագիրը: Կ'արժէ՞ միթէ մինչև իսկ ակնարկուած թիւն մը ընել սակարկութեան մը մաս

սին, որու այնքան տղայամտօրէն դուռ բանալ կարծեր էր իզմիրցի պարօնը, խնդրոյն իր ուզած անձնական կերպարանքը տալու համար: Ո՛չ, չեմ կարծեր: Բայց թող չի կարծուի որ, վերջին խօսքը ըրած եղայ մերկապարանոց գրութիւններու մասին. յուսահատիլ չեմ գիտեր ես. մինչև յաջողիմ իմ բարի նպատակիս մէջ, կը շարունակեմ:

Յ. Ս. ԹԱԽՇԱՆՃԵԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Թոքերը՝ որոնց մէջ կը կատարուի շնչումի բուն քիմիական գործողութիւնը, երկու հատ են, թէև կրնանք նաև մէկ սեպել, քանի որ երկուքն ալ մէկ հասարակ անցքէ մըն է որ զիրենք լեցնող օդը կընդունին և միեւնոյն բունէն է որ իրենց մէջէն վազող արիւնը կըստանան: Բրգաձև են անոնք, սպնդանման և միսի պէս ալ բաներ մըն են. ունին գոգաւոր յատակ մը՝ կեցած ստոծանին վրայ, որ զիրենք կը բաժնէ լեարդէն ու փայծաղէն. ունին արտաքին էջեր կորնթարդ և ներքին էջեր գոգաւոր, որոնք կը գրկեն սիրտն իր յատուկ պարկով:

Թոքերը կախուած կը կենան՝ իրենց վրայ ունենալով մասնաւոր մաշկ մը, որ մեր բժշկական հին գիրքերուն մէջ որոշուած է փառ (plèvre) անունով և ռամկօրէնի մէջ ալ բոֆ օսպիկ յորջորջումով:

Փառը կրկնակ թերթէ բաղկացած թափանցիկ թաղանթ մըն է, տապրակի նման, բայց անծակ և անբերան, որուն մէկ թերթը թոքերուն վրայ և միւսը լանջային խոռոչին ներսը սերտիւ փակած, կը ձևացունէ իր մէջ օդէ զուրկ տամուկ պարապութիւն մը որ շնչառութեան և շնչատրութեան միջոցին խիստ կարեւոր դեր մը կը կատարէ՝ թոքերու ելեւէջը դիւրստասանելով:

Թոքերն իրենց վրայ ունին մեծ մեծ ձեղքեր որոնցմով կը բաժնուին զանազան կտորներու, ալ թոքն ունի երեք կտոր, վերին,

միջին, վարի, իսկ ձախն՝ երկու կտոր, վերին և վարի: Այս կտորները կը կոչուին բլթ (lobe) կամ թոքային բլթ (lobe pulmonaire). բլթները կը բաժնուին երկրորդական շատ մը փոքրիկ մասերու, և կը յօրինեն բազմանկիւն ու շեղանկիւն ձեւեր, որոնք կ'որոշուին պարզ աչքով, մասնաւոր մանկական թոքերու վրայ. այս մասերն ալ կը կոչուին բլթիկ (lobule) կամ թոքային բլթիկ (lobule pulmonaire):

Բլթիկը՝ թոքերու կազմութեան սկզբնական մասն է. բլթիկները միանալով կը ձևացունեն բլթները, ասոնք ալ թոքերը. ըստ այսմ՝ թոքերն ուրիշ բան չեն եթէ ոչ՝ շատ մը բլթիկներ իրարու վրայ շարուած, կիտուած և իրարու կցուած, որով ողկուզաձև գեղձի մը նմանութիւնը կ'ունենան անոնք:

Թոքերու կազմութիւնն ուսանելու համար, բաւ է թոքային բլթիկի մը կազմութիւնը գիտնալ. տեսնենք ինչպէ՞ս շինուած է այն:

Շնչափողն երբ կուրծքն իսնի, կը բաժնուի աջ ու ձախ երկու ճիւղերու, որոնք կը կոչուին՝ ցնցուղ (bronches). այս ցնցուղները թոքերուն մօտիկ հասնելով՝ կը ճղուին աւելի փոքր ցնցուղներու. ձախը կըլլալ երկու և օջն երեք. ասոնք առանձին առանձին ամէն մէկ բլթին մէջ մտնալով՝ կը ճղուին դարձեալ և կը բաժնուին աւելի փոքրիկ երկերկու մասերու, որոնց ամէն մէկն ալ նոյնպէս երկերկուքի բաժնուելով՝ կը փոքրկանան և կը ճիւղաւորուին՝ ճիւղ ծառի մը ճիւղերուն պէս, և երբ բլթիկներու մէջ մտնան, հոն ալ ճղուելով՝ կը յօրինեն ամենանուրբ ցնցուղներ որոնք կը կոչուին ցնցուղիկ (bronchiale):

Ցնցուղիկներու ծայրերը կը վերջանան փոքրիկ ուռեցքներով որոնք բոֆայիկ փօթիկ (vésicule pulmonaire) անունով կը ճանչցուին: Շատ մը թոքային փշտիկներ իրարու միանալով կը յօրինեն թոքային բլթիկ մը: Թոքային փշտիկներն իրենց մէջ ունին խոռոչիկներ որոնք անկանոն ծալքերով կարգ կարգ խորշերու բաժնուած են և կը նմանին ճիւղ մեղուի փեթակի. այդ փեթակաձև խորշերը կը կոչուին բոֆայիկ բջիջներ (al-

veoles pulmonaires), և են շնչողական մեքենային ամէնէն կարեւոր մասերը, զի անոնց մէջն է որ օդն ու արիւնը ժամադրաւայր բրած են. հոն է որ անոնք իրարու կը հանդիպին, իրենց խորհրդաւոր փոխանակութիւններն ընելու:

Սակայն գիտցէք, թէ թոքերու մէջ տարածուող և ճիւղաւորուող ցնցուղիկները, մինչև որ թոքային բլթիկներն ու թոքային փշտիկները ժամանեն ու թոքային բլթիկները ձեւացունեն, իրենց կազմութեանը մէջ զգալապէս կը փոխուին, ցնցուղիկները որ կրճկային օղբէր և օղակներէ շինուած են, հետզհետէ երբ նրբանալով ցնցուղիկ ըլլալու հասնին, իրենց հիւսուածքին կրճիկը բոլորովին կը կորսնցունեն. բայց դձրեային և նեարդային մասերը կը պահեն, որպէսզի ունենան աւելի մեծ առաձգականութիւն, ինչ որ շնչողութեան և թոքերու ծաւալման համար խիստ կարեւոր պայման է:

Գնցուղիներու և ցնցուղիկներու այս բաժանումին և ճիւղաւորումին կը հետեւին նաև արեան անոթները. այսպէս, թոքային շնչերակը (artère pulmonaire), սև արիւնին մեծ անոթը, սիրտէն մեկնելով երբ թոքային բլթիկներու մօտ հասնի, կը բաժնուի աջ ու ձախ ճիւղերու, և ասոնք ալ երկրորդական ճիւղերու. աջը կըլլայ երեք, ձախը՝ երկու. յետոյ, ցնցուղիկներու մէն մի բաժանումներուն հետ կ'երթան կը վերջանան թոքային բլթիկներու մէջ, ուր տարածուելով կ'ունենան իրենք ալ ամենանուրբ բաժանումներ, այնպէս՝ որ ալ կըլլան հերանման անոթիկներ կծիկի ձեւով: Այս կծիկներէն կը մեկնին ուրիշ հերանոթներ որոնք տակաւ դէպի դուրս թոքային կեղրոնները դիմելով կը խոշորանան և վերջապէս կը յօրինեն ամէն մէկ թոքի համար երկերկու երակ, որոնց միջոցաւ մաքրուած կարմիր արիւնը կերթայ թափիլ ձախ սիրտը:

Այս է ահա վերի վերոյ կազմութիւնը թոքային բլթիկներու և թոքային փշտիկներու որոնց մէջ տեղի կ'ունենայ շնչողութեան քիմիական գործողութիւնը որուն բուն նպատակն է՝ սև—աղտոտ արիւնը, ինչպէս կանխաւ ըսի, փոխարկել կարմիր մաքուր արիւնի:

Եւ ինչպէ՞ս կը կատարուի այդ գործողութիւնը: — Բացատրութիւնն ալ չափ պարզ է:

Շնչառութեան միջոցաւ երբ օդը թոքային բլթիկներու մէջ հասնի, զանոնք անմիջապէս ուռեցունելով, կը ճնշէ անոնց ներքին մաղասային թաղանթը, նաեւ հոն տարածուող թոքային երակի հերանման վերջաւորութիւնները, լի արդէն սև արիւնով, այս ճնշումին ազդեցութեամբ՝ օդին թթուածինը բլթիկներու ներքին ամենանուրբ թաղանթէն քիչ քիչ մաղուելով՝ կ'արտալուծուի ու կ'անցնի արեան անոթներուն մէջ և կը թափանցէ արիւնը. արիւնին մէջ՝ թրթուածինն անմիջապէս կը զուգի անոր բոսոր (hemoglobine), արիւնագնդիկներու գոյն և կարմրութիւն տուող նիւթին. թոքային քիմիական գործողութիւնն այլևս կատարուած է, այրումն յառաջ կուգայ, բոսորը կը փոխուի քրուաբոսորի (oxyhemoglobine), երակային⁽¹⁾ սև աղտոտ արիւնը կըլլայ կարմիր՝ զարկերակային⁽²⁾, այսինքն՝ հարուստ թթուածինով եւ կենսատու:

Այս գործողութիւնէն յետոյ, թոքային բլթիկներն անմիջապէս կը կծկին, իրենց մէջ գոյացած ածխային թթուն ու ջրաշոգէին մէկ կողմէ դուրս արտաքսելու, եւ միւս կողմէն ալ շնչերակներու մէջ մղելու նոր շինուած արիւնը, որ թոքային երակներով կը թափի սիրտը, հոնկէ ալ մալս (aort) շնչերակին միջոցաւ՝ բոլոր գործարաններու հերանման անոթներու մէջ կ'առաջնորդուի, անոնց հիւսուածքին սննդառութեան յատուկ նիւթերն իրենց ջամբելու:

Եւ այս իսկ է ահա արիւնաբարութեան (hematose) գործողութիւնը, որ կը կատարուի ինչպէս ըսի արդէն՝ թոքային փշտիկներէ ձեւացած բլթիկներուն մէջ:

Տոքթ. Վ. Թորոսեան

1. Sang veineux.

2. Sang artériel.

ԾԱՌԿԱՆՈՅԳ

Բիրերէդ զատ ես հորիզոն չեմ ճանչցած .
Սէրդ երկիրն է այն քաղցրաւէտ, օդածին,
Ուր տենչերուս ծաղիկները կը բացուին,
Դո՛ւն՝ շահօքրամս անտալուզեան թափանցանց :

Ձիւնաթորմի պարանոցէդ սարսրուուն,
Ժապաւէնի յորդ փրփուրներ կը տեղայ,
Ուր մաղերուդ ցայտքն ալ կ'եռայ ակամայ,
Դո՛ւն էտլվայսս ալպեան թովիչ լեռներուն :

Որհրդամոլ հոգիդ՝ լոյսի ծաղկանօթ,
Բագինս ըրի շնորհներուդ տօներուն,
Ուր հրայրքիս ջահը վառեցի անհուն,
Դո՛ւն՝ պէնկալեան վարդի բուրգը անծանօթ :

Ծիածանին մէջ ամէն թոյր ալ կուլայ,
Տարաշխարհիկ բաժակ մըն ես նրբահիւս,
Ուր կը կաթէ ցօղը իմին աչքերուս,
Դո՛ւն՝ իտալեան լիճերու թարմ գամելիս :

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՅԲՏՄԱՌԹԵԱՆ ԾԱՌԿԱՆԵՐ

Ո՞րք անտառներու միջեւ ապաստան
Փնտռող մոլորուն թռչնիկի մը պէս,
Օր մ'ուղեկորոյս երազ մը ոսկի
Ներս սպրդեցաւ տրամակոծ սրտէս :

Դգուեցի զինքը՝ չոյեցի սիրով .
Շունչովս տաքցուցի նուաղած հոգին,
Իր թշուառ կեանքին վէպը հարցուցի,
Ու խեղճը պատմեց ինծի լալազին :

Հրեշտակ մըն էր ան . քնքոյշ երկնաբնակ
Ու իր կապտադեղ բոյնը կորուսէր,
Երկրի վրայ տրտում փնտռէր ապաւէն,
Անունն հարցուցի . ու հեծեծեց «Սէր...»

Սրբեցի արցունքն այտերուն վրայ
Համբոյր մը դըրի ճակտին սիրակէզ .
«Մի՛ լար, հծծեցի, պի՛նդ փարէ կուրծքիս,
«Կապտադեղ երկինք պիտի տանիմ քեզ...»

Ու վտիտ, նիհար մարմինն իր դողդոջ
Մեղմօրէն գրկած քայեմ շարունակ,
Դէպի հորիզոնն, հեռո՛ւ, անծանօթ՝
Անտապատ ճամբէս մինակ, տրտունակ... :

ՀՐԱՆՏ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՂԻ ՓԱՓԱԶԵԱՆ

Հինգչաքթի առաւօտ, Օրթագիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ հանդիսաւորապէս կատարուեցաւ Տիկին Տիրուհի փափազեանի յուղարկաւորութիւնը, նախագահութեամբ թաղին քարոզիչ Տ. Վահրամ արքեպիսկոպոս Մանկունիի, որ չըջապատուած էր երկու վարդապետներէ և քահանայական դասէն: Ազգականներու եւ բարեկամներու բազմութիւն մը չըջապատած էր դագաղը՝ ծածկուած պսակներով զորս նուիրած էին հանգուցելոյն զաւկները: Մանկունի Սրբազան խօսեցաւ դամբանականը, որմէ ետք դագաղը թափօրով առաջնորդուեցաւ գիւղին գերեզմանատունը և ամփոփուեցաւ ընտանեկան դամբարանին մէջ:

Հանգուցեալը, ազնուական գերդաստանի մը շառաւիղ, կողակիցն էր բարեյիշատակ Միրիճան Ամիրայի, և երկար տարիներէ ի վեր այրի ու սգաւոր՝ իր առաքինազարդ կեանքովը ու մայրական օրինակելի ընթացքովը բոլոր զինքը ճանչցողներուն յարգանքը գրաւած էր:

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ազգ. Կեդրոնական վարժարանի իննամակալութիւնը կը ծանուցանէ թէ՛ վարժարանին նոր տարեջրանը կը սկսի յառաջիկայ Սեպտեմբեր 4, երկուշաբթի օր: Ա. կարգ մանկ փափագող աշակերտները կը հրաւիրուին ներկայանալ Ղալաթիոյ Խորհրդարանը ամէն օր մինչև ժամը 3 1/2 ը. թ. և իսկ չորեքշաբթի և շաբաթ օրերը մինչև ժամը 9 ը. թ. արձանագրուելու համար: Պատ. Ուսումն. Խորհրդոյ կողմէ վիճարուած չըջանաւարտները առանց քննութեան կ'ընդունուին: Մտից քննութիւնները պիտի կատարուին յառաջիկայ օգոստ 17, 18, և Ուր. օրերը ժամը 1 1/2-ին ը. թ.:

Իսկ Կեդր. Նախակրթարանի բացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Օգոստոս 21, երկուշաբթի օր: Հետեւաբար կը հրաւիրուին թէ՛ հին և թէ՛ նոր գալիք աշակերտները մինչև նոյն օր ամէն առաւօտ ներկայանալ Ղալաթիոյ Խորհրդարանը՝ արձանագրուելու համար:

Թէ՛ Կեդրոնական վարժարան և թէ՛ Նախակրթարան մտնելու համար ներկայացող նոր աշակերտները պէտք է ի ձեռին ունենան պատուաստի, ծննդեան և բարի վարքի վկայագիր և իրենց ծնողքը կամ պաշտպանը պէտք է ընկերանայ երենց՝ արձանագրութեան օրը:

Ի դիմաց իննամակալութեան
Ատենադպիր Ատենապետ
Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆ Յ. ԷՍԱՆԱՆ
6 Յուլիս 1906, Ղալաթիա

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Պ Ա Ր Տ Ի Զ Ա Կ

Վարժարանիս նպատակն է՝ բնիկ ու ամերիկացի կարող ու փորձառու ուսուցիչներու խումբովը՝ տալ իր ուսանողներուն հիմնական, առողջ դաստիարակութիւն մը, համաձայն՝ գործնական կեանքի պահանջումներուն: Աշակերտները կը վայելեն բժշկական և ընտանեկան կատարեալ խնամք վարժարանին մասնաւոր բժշկին, գիշերօթիկ և ուսուցիչներու անմիջական հսկողութեան և Տիկին Չէյմպերսի մայրական հոգածութեան տակ: Նորակառոյց և գեղեցիկ շէնք մը կ'աւելնայ վարժարանին օդաւէտ շէնքերուն վրայ, իր մէջ պարունակելով ընդարձակ սրահ մը, գրատունը և մարմնամարզատունը:

Վարժարանին վերամուտը կը սկսի սեպտ. 5-ին (Ը. Ե.) Դ. օր, ինչ ինչ նորագոյն կարգադրութիւններով: Յառաջիկայ տարեջրանին՝ աւելի ուժ պիտի տրուի ֆրանսերէնի, իսկ անգլիերէնի համար պիտի շարունակուին այն կարգադրութիւնները որոնք անցեալ տարի մեծապէս արդիւնաւոր եղան՝ աշակերտները զարգացնելու լեզուին գործնական վարժութեանց մէջ, երեք ամերիկացի գիշերօթիկ ուսուցիչներու մասնաւոր խնամքին տակ:

Գիշերօթիկներուն տարեթուական է 16 օսմ. ոսկի, որուն կէսը վճարելի է սեպտ. ին սկիզբը, իսկ մնացեալը՝ յունվարի մէջ: Գործիական երաժշտութեան դաս առնողները պիտի վճարեն տարին 1 ուկէս օսմ. ոսկի: Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի կամ վարժարանին Պոստոյ գործակատար Դրիգոր էֆ. Շահպազեանի. Պայպ-Հաուս, Կ. Պոլիս, և կամ Տնօրէնութեան ի Պարտիզակ:

ՁԻԻՆԻՆ ՏԱԿ

(ՃԱՄԲՈՒ ՊԱՏՄՈՒԱԾԲ)

I.

Օղբ բաց էր, ցուրտը տասը աստիճան ցոյց կուտար, եւ ձիւնի քանի մը նուրբ բաղիւններ միայն կը տեղային. գրեթէ ամբողջ դեկտեմբերին մէջ օղբ այսպէս կ'երթայ. մթերանոցին առջեւ երկու ձիով լըծուած ճամբու կառք մը կեցած էր:

— Է՛, ուրեմն, ի՞վան Տուրա՛ք, ըսաւ Կօլօխովսկի, ոսկիի վաճառականը՝ մեծ մուշտակի մը մէջ փաթթուած՝ վերնագաւթակին վրայ երեւալով:

Ի՞վան Տուրաք, նիհարկէ կ'ծերունի մը, բարակ վերարկուով մը ծածկուած, մօտեցաւ, ամբողջ հասակը շտկելով, ու ծիծաղալարժ կերպով կոպերը շարժելով:

— Սէմէն Ավտէի՛չ, ահաւասի՛կ եմ, մըթմըթաց. ես այլեւս պիտի մեկնիմ սա՛ կողմէն, ճիշդ քու ճամբուդ հակառակ կողմէն:

— Անհեթեթ բան է ատիկա. թո՛ղ թէ քու հանգիստիդ հախար եմ. կէս գիշերին ատենները պիտի կ'հանք վերադառնալ, և ես քեզ իմ ձիերովս տուն կը վերադարձնեմ, կը հասկնա՞ս. և յետոյ, Մարֆա Անտրիէվնա մեզի մօտ ծծել տուող բէլմէններ (ռուսական անուշեղէն) պիտի չինէ. ու վերջապէս, խորհէ՛ թէ որքան պիտի ձանձրանամ այս ճամբան միս մինակ երթալով:

— Անոր համար է որ, Սէմէն Ավտէի՛չ, մուշտակս...

— Ի՛նչ փոյթ, անգամ մը կառքին նայէ, նոյն իսկ ժողովրդապետը ասանկ կառք մը չունի:

Ի՞վան Տուրաք խորհեցաւ. մէկ կողմէն տուն երթալ կ'ըզար, — հինգ վերսդի հեռաւորութիւն մը լոկ — եւ միւս կողմէն ի՛նչպէս վերադառնալ Սէմէն Ավտէի՛չը՝ որմէ կախում ունին ամէնքը. որովհետեւ Սէմէն Ավտէի՛չ չա՛տ պիտի վայրանար եթէ մեր-

ժուէր, և այն ատեն խոստացուած դրամը պիտի չտար: Ծերունին սրտի ճմլումով մը Ռաճթանա գիւղի իր տանը վրայ խորհեցաւ, իր տունիններուն՝ որոնք անհամբեր իրեն կը սպասէին... Չէ՛, հաստատապէ՛ս, ուրիշ ընելիք չկար, պէտք էր տեղի տալ:

— Չեզի հետ կուգամ, Սէմէն Ավտէի՛չ, ըսաւ. իմ ճամբաս չէ ատիկա, բայց հոգ չէ՛, կ'ուզեմ հաճելի ըլլալ ձեզի:

— Վերջապէս, միմռաց միւսը. գալով տաքութեան, հոգդ մի՛ ընեն. ու ճամբու կազմածքին վրայ իր տիրոջ ակնարկը կը պատցնէր:

Երբոր կառքին մէջ տեղաւորուեցան, ի՞վան Տուրաք բոլորովին անկիւն մը կ'ծկած մնացած էր. Սէմէն Ավտէի՛չ յաղթամարմին էր, եւ ինքը մինակ նստարանին կէսէն աւելին կը գրաւէր:

— Տեղս նեղ է, հառաչեց ծերունի:

— Անմի՛տ, աւելի՛ աղէկ, տաք կ'ըլլայ. վերնագաւթակին վրայ Կօլօխովսկի կինը, մանկամարդ տիկին մը, և ծերունի մը մեկնումը կը դիտէին, և մերձակայ պատուհանի մը ապակիին յենած մօնկական դէմքեր կը նշմարուէին:

— Օ՛ն, ըրաւ վաճառականը:

Կառապանը ձեռքերը իրար շփեց, սանձը ժողվեց, ու կառքը մեկնեցաւ:

Լայնարձակ տախտանները՝ ուր ցանցնուած են ոսկիի դործատուներ՝ ձմեռը շատ տխուր պատկեր մը կը ներկայացնեն. նայուածքի հասցողութեան չափ ամէն ինչ մնում է. սպիտակ բացաստանը անընկճելի, հիւանդագին թուլութիւն մը կը հաղորդէ անցորդին: Յանցաւորէն տեսնուած աւանները ձիւնին տակ թաղուած են, և ճամբաները՝ փոթորիկներէն բոլորովին տակն ու վրայ: Տեղացիները սակայն, ու շրջիկներն ալ, գեղեցկութիւն մը կը գտնեն այս ամայի և անլարժ անհունութեան մէջ:

Ի՞վան Տուրաքի ջիղերը ոտք կ'ելլէին հիմակ՝ որ սկսած էր հեղձնուլ:

— Համբերութիւն, կ'ըսէր Կօլօխովսկի, երեք ժամ մնաց. և յետոյ, Մարֆա Անտրիէվնաի բէլմէնները, օղին և աղանդերները...

Իվան Տուրաք շահեկան տեղացի մը կը սեպուէր. 15 տարի առաջ հարուստ էր, և ընդհանուր մեծարանքով շրջապատուած։ Բայց բախտը անկայուն է, մասնաւորապէս ոսկիի ճարտարարուեստին մէջ. շատ քիչ ժամանակէն մարդ կը հարստանայ, ու նաև, չա՛տ քիչ ժամանակէն աւերակ կը դառնայ։ Նոյն բանը պատահած էր Իվան Տուրաքի ալ. նեղութիւնը զինքը շրջապատած էր, ու քիչ վերջը թշուառութիւնն ալ. և այն որ երբեմն փարթամ Իվան Նիքիթիչ Լէկաքով եղած էր, հիմակ ուրիշ բան չէր, բայց մակաբոյծ մը, որ իր ապրուստը կը ճարէր ոսկիի վաճառականներէն. բան մը որ սուղի կը նստէր իրեն, որովհետեւ Իվան Տուրաք, այսինքն տկարամիտ Իվանը, իր պաշտպաններուն իրբեւ միմօս և souffre-douleur կը ծառայէր։ Վերջապէս վարժուած էր ուրիշներու ծաղրանքին, ու այն դերին՝ զոր կատարել կուտային իրեն. իր ճակատագրին հետ հաշտուած էր՝ բոլոր վիճակազուրկ արարածներուն պէս։

Այս վայրկեանին կը խորհէր թէ ի՞նչ ստահակ մըն էր, օրինակի համար, Կօլօխ վաթով՝ որ երբեք առիթը չէր փախցնէր զինքը սպասորեարին առջեւ պղտիկ ձգելու։

Կառքը կը սահի, կարծես կարագի վրայէն. ատեն ատեն կառագանը ձիերուն կոշ մը կ'ուղղէ. Իվան Տուրաք իր անկիւնին մէջ կը միտուի, աչքերը կը խփէ, և իր անցեալին վրայ կը խորհի։ Ի՞նչ երջանիկ էր այդ կեանքը. կրնա՞ր երբեք երեւակայել թէ այսքան խղճալի տարիներ պիտի յաջորդէին անոր։ Վերջապէս, է՛հ, Աստուած այնպէս ուզած էր... հոգ չէ՛. եթէ ինք իսկ եղած էր իր աղէտքին պատճառը, իր դրացին ալ մասնակցութիւն մը ունեցած էր անշուշտ ատոր մէջ։

Քնացաւ. որքա՞ն ատեն, չէ՛ր գիտեր. դադարէ մը արթնցաւ յանկարծ։

— Ի՞նչ կայ։

— Է՛հ, Սադանն է որ կը զուարճանայ։

— Ի՞նչ, փոթորի՞կ կայ։

Հարուածը երկու ճամբորդները իրենց թմբիրէն սթափեցուց։

Տափաստանին տեսքը բոլորովին փոխուած էր, ցուրտը սաստկացած. այլեւս չէր ձիւներ. ամբողջ դաշտավայրը կը դողար կայծակի պէս օրընթաց հովերուն տակ՝ որոնք գետինը կը քերէին՝ ճերմակ բարակ փոշիի յորձանքներ բարձրացնելով։

— Կը սխալի՞ս, գոչեց Կօլօխ վաթով պղտոր երկինքը զննելով։

— Սադանն է, կրկնեց միւսը համոզուած։

Կարծես այս խօսքերը հաստատելու համար, հովի կատաղի յորձանք մը անցաւ, որմէ ամբողջ տափաստանին տարածութիւնը հեծեց։ Ամպերը կը թանձրանային ու կը թանձրանային, և կարծես անպատում բան մը կ'առկախուէր մթնոլորտէն՝ իյնալու պատրաստ՝ առեւի՛ր. մանրահատ ու չոր ձիւն մը ամէն կողմէ կը պաշարէր անցորդները, ու սանձահարուած ապակիի անձրեւի մը պէս ղէմքերնուն մորթը կը ծեծէր։

Իվան Տուրաք իր խեղճուկ մուշտակին մէջ կը կծկտէր։

— Սառ ցուրտ մը կայ, մրմնջեց։

— Ճամբադ կորսնցուցիր, գոռաց Կօլօխ վաթով։

— Ի՞նչ ճամբայ. երկար ատեն է որ ճամբաս կորսուած է արդէն։

Ճամբորդները սոսկումէն դողացին. ա՛լ ճամբայ չկար, եւ փոթորի՛կը, — մա՛հ էր, մա՛հ։

Վաճառականը վար իջաւ, ձիւնին մէջ խորամխուած կառքին չուրջը դարձաւ, պարտասուն ձիերը քնեց, և բարկութիւնը իջաւ. ի՞նչ ընել, հարցուց ինքնիրեն յուսաբեկ, որ կողմէն ջանալ ճամբան վերստին գտնելու, գիշերը հոծ էր, և ոչ մէկ լուսաւոր կ'երեւար մթադին երկինքին վրայ։

— Ի՞նչ ընենք, յարեց բարձրաձայն։

— Առա՛ջ երթանք, նետեց երկչոտ, Իվան Տուրաք։

— Շլա՛միտ, ոռնաց վաճառականը. երթա՛լ, ի՞նչպէս, և առա՛ջ, դէպի ո՛ւր, Սադանի՛ն... հո՛ս նայէ, կը տեսնե՞ս, խե՛րդ պիտի անիւծեմ, և իրաւունք պիտի տան ինծի։

Այս նոր բարկութեան ճայթումները ընդ-
միջուեցան ոռնումովը մոլորած չունի մը՝
որ մինչեւ հոն կառքին հետեւած էր, և որ
հիմակ նստած, խղճալի ու հեծեծագին, կը
դողդղար ամբողջ մորթովը՝ առջեւի մէկ
թաթը վեր վերցուցած:

— Ա՛, դուն, սպասէ:

Ու կօլօխվաթով ցաթկեց:

— Թողէ՛ք այդ կենդանին, ըսաւ իվան
Տուրաք, գուցէ անոր հետ մէկտեղ սա-
ռինք:

Վաճառականը, մինչեւ ծունկերը ձիւնին
մէջ, ձիերուն մօտեցաւ և անոնց վիզը չօ-
շափեց. հաստատապէ՛ս, ա՛լ չէին կրնար
յառաջանալ, և իրենց կեանքը անոնցմէ՛
կախում ունէր...

Այլ սակայն պէտք էր բան մը ընել,
յուսահատական փորձ մը. ու երեք մարդի-
կը գործի սկսան. ձիւնը բարդելով երկու
կողմին վրայ ետ մղեցին որպէս զի կարելի
ըլլար կառքին չուանները քակել. և յետոյ,
կառապանը առաջ անցաւ, կօլօխվաթով
հետեւեցաւ անոր, ձիերուն սանձը բռնած.
հուսկ յետոյ կուգար իվան Տուրաք, որ
դժուարաւ կը քալէր, իւրաքանչիւր քայլա-
փոխին մինչեւ սրունքներուն կէսը սուղուե-
լով, հովը այնքան կատաղօրէն կը փչէր որ
անկարելի էր շնչառութիւնները ճշդել. աչ-
քերը կը կսկծէին, կիսովին կուրացած.
սարսափելի ցուրտ մը շարժումները կը հաշ-
մէր. իվան Տուրաք շատ չանցած գետին
ինկաւ:

— Սէ՛մէն Ավտէի՛չ, մըթմըթաց, ա՛լ ու-
ժաթափ եղայ. չունը քովս նստաւ:

11.

Հովը փչեց տարաւ հէգ մարդուն խօս-
քերը. կառքը արդէն կ'անյայտանար մորի-
կին մէջ, Ծերունին, սառնամանիքին մէջ
նստած, վայրկեանէ վայրկեան տկարանալը
կըզգար:

— Տէ՛ր, գթա՛ ինծի, սկսաւ աղօթել
բարձրաձայն:

Կօլօխվաթով ձիդ ժամանակին յիշեց
ծերունին, ու վերադառնալով շուտով գտաւ
շայն:

— Իվան Նիքիթի՛չ, ի՛նչ կ'ընես հոռ:

— Կը մեռնի՛մ, պատասխանեց խոնար-
հաբար ծերունին. դուն երիտասարդ ես,
պէտք է ապրիս. զիս հո՛ս թող, չեմ ուզեր
այլեւս քեզի արգելք ըլլալ:

Վաճառականը զայն ուժգնակի վեր բար-
ձրացուց ու մինչեւ կառքին քով տարաւ:

— Եթէ մեռնիլ կայ, միասին պիտի մեռ-
նինք. մըթմըթաց, յուզումէն շնչահեղձ:

Կառքը ա՛լ չէր շարժեր. կառապանը գե-
տին նստած էր. անգամ մը որ ծերունին
կառքին կաշեծածքին տակ պատսպարեց,
կօլօխվաթով, ձեռքի հարուած մը տուաւ
կառապանին՝ զայն սթափ պահելու համար.
ու ձիերուն քով գնաց. ձիերէն մէկուն ոտ-
քը գայթած էր, ու ձիւնը այնքան խոր էր
որ ձին մէջը կը մխուէր, այնպէս՝ ինչպէս
մարդ կը խղդուի:

Վաճառականը լուցկի մը զարկաւ, ու
դողդոջուն պղտիկ լոյսը իրեն ցցուց թէ
կենդանիին աչքը պղտոր ու անշարժ էր:

Ամէն ինչ լմնացած էր... ձիւնը զիրենք
պիտի լափէր:

— Շո՛ւտ, լուծը քակէ:

Կառապանը, իր ընդարմացած մատնե-
րով, հնազանդեցաւ տաժանագին:

— Ձին կորսուած է, ըսաւ անտարբեր:

— Անգամ մը որ քակենք, թերեւս կա-
րենան երկուքը մէկ տուն հասնիլ:

— Կորսուած, կրկնեց կառապանը միեւ-
նոյն շեշտով:

Երկու կենդանիները ոտքի ելան, և
կօլօխվաթով զանոնք կառքէն հեռացուց,
յուսալով որ անոնք բնաղդաբար տուն պի-
տի դառնային գոյժը տանելու. բայց անոնք
դարձան կաշեծածքին ետին ապաստանելու.
մեծ գուլթ մը վաճառականին սիրտը սեղ-
մեց... ձիերն ալ իրենց հետ մեռնիլ կ'ու-
ղէին:

Կառապանը դարձեալ կծկտած էր, և
ամէն վայրկեան կ'աներեւութանար մորիկին
յորձանքներուն մէջ. երկու քայլ անդին
այլեւս ոչինչ կ'երեւար: Կօլօխվաթով կը
զգար թէ անդիմադրելի քնէածութիւն մը
զինքը կը շրջապատէր. դոյզն շարժում մը

մահու չափ ցաւազդու էր . սրունքները կը սայթաքէին :

Մօտեցաւ կառքին , որ քառորդ ժամուան մէջ կիսովին սուղուած էր .

— Ի՞վա՛ն...

— Ահաւասիկ եմ , պատասխանեց ծերունին որ կ'աղօթէր :

— Ի՞նչ պիտի ընենք կառապանը . եղած տեղը պիտի սառի : Եւ իր մուշտակը ա՛յնքան թեթեւ է , ու հովը այնքա՛ն խիստ կը խածնէ որ... եկո՛ւր , երեք հոգիով աւելի կը տաքնանք :

Ի՞վան Տուրաք լուռ էր . կառքը երեքը միասին պարունակելու համար չա՛տ նեղկուկ էր , թո՛ղ թէ սպասաւորը կը մերժէր ներս մտնել . բայց տէրը զայն բռնի բերաւ :

— Ստահա՛կ , պիտի սառի՛ս հոն՝ ձիւնին մէջտեղը :

— Սադանը կը զուարճանայ , մըմնջեց միւսը , իր հանդարտ շեշտովը , ու արդէն հովին ազդեցութեան տակ իր լեզուն կը թանձրանար :

Այս տեղափոխութիւնը բողոք մը բարձրացուց շանը կողմէն՝ որ այսպէսով միս միսակ կը միար ճամբուն վրայ . ու այս զըրկանքին դէմ ոռնաց :

Կառքին մէջ մութ էր . երկու հովի միջեւ , կը լսուէր դռփիւնը և ուժգնակի փունջտուքը ձիերուն՝ որոնք գլուխին կանչեածքին կը քսէին , ի դուր յուսալով պաշտպանուիլ :

Կօլօխվաթով շունին վրայ խղճաց , եթէ ներս առնէին , ա՛լ աւելի պիտի տաքնային :

— Անկարելի՛ է , գոչեց Ի՞վան Տուրաք , արդէն այս անիծեալ սպասաւորը ոտքերս կը ճմլէ :

Երկար ժամանակ բառ մը չարտասանեցին . ատեն ատեն վաճառականը լուցկի մը կը վառէր , և ակնարկ մը կը նետէր դռնակին վրայ բացուած լուսամուտէն դուրս . ձիւնը հիմակ այդ պատուհանիկին կը հասնէր . շունը թարթափուն լոյսին կը վազէր ու կը հեծէր սրտաճմլիկ :

— Կը խղդուիս կոր , ըսաւ վերջապէս

Ի՞վան Տուրաք , գլուխս կը դառնայ :

— Եւ սակայն , Ի՞վան , դիտեց Կօլօխվաթով , կառապանը ստոյգ մահուան մը չենք կրնար խրկել , ա՛ն ալ հոգի ունի :

— Լա՛ւ , ես դուրս կ'ելլեմ . կը նախընտրեմ սառիլ՝ քան շնչահեղձ ըլլալ :

Իրաւ ալ անկարելի էր շնչել կառքին մէջ , որուն ամենափոքր ծակերն իսկ գոցած էր ձիւնը . այն վայրկեանին որ Ի՞վան Տուրաք դուրս ելլելու կը պատրաստուէր , սպասաւորը ըսաւ թէ ինք պիտի ելլէր :

— Իմ հայրս այսպէսով վերջը գտած է , ձիւնին մէջ... դուն կեցի՛ր , ան գիտէ իր ընելիքը :

Ա՛լ վարանելու ժամանակ չէր . իրենցմէ մէկը պէտք էր յանձնառու ըլլար միւսներէն առաջ սառելու . դռնակը կիսովին բացուեցաւ . կառապանը սահեցաւ դուրս . շունը իրեն եկաւ հրճուագին կաղկանձելով , վըստահ հիմակ՝ թէ մինակ պիտի չմեռնէր :

Կառքին մէջ՝ դամբանի մթութիւն . շուրջանակի մորիկը կը պողտայ , թռչուններու անծայր անցքի մը պէս . երկինքէն ու երկրէն ինչ որ կը զանազանուի , կարծես խառնակուած է թեւերու առասպելական յորձեքերու մէջ :

Կօլօխվաթով կը խորհի իր կառապանին վրայ , որ հո՛ն , մօտիկը , կ'ոգեւարի :

Ի՞վան Տուրաք՝ աղօթկեր՝ մահուան կը սպասէ . վայրկեան մը կը սարսռայ , իր քովէն լսելով հեծկլտուքներ՝ որոնք մանուկի մը լացին կը նմանին :

— Սէմէն Ավտէ՛րչ , աղա՛ւնիս , պէտք չէ քաջութիւնը կորսնցնել :

Հեծքերը կը կրկնապատկուին :

— Սէմէն Ավտէ՛րչ , յուսահատութիւնը մեղք մըն է :

— Ես իմ վախճանէս չեմ վախնար . բայց , ա՛հ , որքա՛ն սարսափելի է մեռնիլ , այս մեղքերու բեռան տակ... Ի՞վան , յաճախ վիրաւորած եմ սիրտդ... չա՛տ յաճախ... ներէ՛ ինծի :

— Աստուած պիտի ներէ քեզի , բայց դուն ալ ինծի՛ ներէ :

Լուութիւնը դարձեալ տիրեց անոնց միջ

զեւ, ուրազանք կ'ոռնար ու կը հեծէր. մերթ-կարծեա անտուաղ ձիւաղներու ամբողջներ միջոցին մէջ կը պայքարէին:

Հեծկտուքները դադարած էին. Կօլօս-վաթով, հանդարտած, ըսաւ.

— Իվան Նիքիթիչ, դուն ծերունի՛ մըն ես, խոստովանցո՛ւր զիս:

— Ի՞նչպէս կրնամ ընել ատիկա, ես բօր չեմ:

— Ծայրայեղ պարագաներու մէջ արարո-ղութիւն կրնայ ընել մարդ. դուն գիտես եկեղեցիին ծէսերը... չեմ ուզեր մեղաւոր մեռնիլ. այո՛, որքան ալ որ երիտասարդ, սակայն շատ մեղք գործած եմ:

Իվան Տուրաք հազաց՝ ձայնին ուժգնու-թիւն տալու համար, եւ արտասանեց հան-դիսաւոր.

— Տէ՛ր, մաքրէ՛ զիս, ողորմէ՛ մեղաւո-րիս. յետոյ յարեց.

— Գլուխդ բաց, Սէմէն Ավտէիչ՝ Ծառայ Տեառն:

Միւսը հնազանդեցաւ. ծերունիին սա-ռուցիկ ձեռքը հանգչեցաւ մատաղ գլխուն վրայ, ու դողդոջուն ձայն մը արտասանեց առաջին աղօթքը:

Կօլօսվաթով կուլար. իր կարգին, Ի-վանի պատուէրին համաձայն. «Հաւատամ-ք»ը ըսաւ, և յետոյ սկսաւ ճշմարիտ խոս-տովանանքի մը:

— Սէմէն Ավտէիչ՝ Ծառայ Տեառն՝ կը յիշե՞ս թէ Աստուծոյ կը խօսիս, և ոչ ինծի:

Գրեթէ ամէն հարցումի զղջացեալը կը պատասխանէր.

— Մեղա՛յ, Աստուծոյ...

— Հիմակ չե՞ս յիշեր, հարցուց վերջապէս ծերունին, մասնաւոր մեղքեր:

— Ամէն բանի մէջ մեղք գործեցի... Նախանձեցայ, և իմ վիճակս ինծի երբեք բաւական չէր թուեր. միշտ իմ ունեցածէս աւելիին պէտք ունէի, ու միշտ աւե-լիին. ինքզինքս գոհացնելու համար ու-րիշին ստացուածքին աչք կը տնկէի. իմ ծերութեան տարիներուս պիտի զրդ-ջամ կ'ըսէի ինքնիրենս. Աստուած չուզեց որ այդ տարիքին հասնիմ... Եւ հիմակ իմ հէգ հօրաքոյրս՝ Բաթէրինա Սթէֆանովնա՝ բացը պիտի մնայ իր գաւակներով, որովհե-տեւ զինքը խաբեցի, և պզտիկներուն ապ-

րուտը ապահովելու՝ բնաւ հոգ չտարի. — և ոչ իսկ իմ հոգիիս փրկութեան փոյթ կ'ը-նէի. կը կրկնեմ, ամէն կերպ մեղքերով յանցաւոր եմ...:

— Աստուած թողութիւն չնորհեացէ...

— Իմ խնամակալութեանս յանձնուած եր-կու քեռորդիներուս ժառանգութիւնը իւ-րացուցի... տափաստանին մէջ շատ մը աղջիկներ առեւանգեցի:

— Աստուած թողութիւն չնորհեացէ...

Կօլօսվաթով զգաց թէ վերջին քունը կը ծանրանար իր վրայ. իրեն կը թուէր թէ, հիմակ, մրրիկը չէր այլեւս որ, հոն, վերը, կը գոռար, այլ Նախախնամութեան ձայնը:

— Արձակեացէ քեզ Աստուած յամենայն մեղաց քոց, Սէմէն Ավտէիչ՝ Ծառայ Տեառն, արտասանեց անգամ մըն ալ Իվան Տուրաքի հաստ ձայնը...

Երեք օր վերջը, երբ վերջապէս փոթո-րիկը դադրեցաւ, կառքը գտան իր ձիւնէ փոսին մէջ, Մարդ ու անասուն սառած էին. ու մեռած՝ իրարու քով, ինչպէս ապրած՝ քով քովի:

ՍԱՍԻՆ ՍԻՊԻՐԻԱՔ

ՀԱՅԱՅՈՒԹ՝ ՄԻՍԱԿ ՄԵՏԱՐԵՆՅ

ՄԱՍԻՍԻ 17րդ թիւը հրատարակուեցաւ յունիս 17ին, և 18րդ թիւը կը հրատարակու-ուի այսօր, 15 յուլիս: Այս երեք շաբթուան ընդհատումը չի խանգարեր սակայն մեր բա-ժանորդագրական հաշիւները, և ամէն անոնք որ ներկայ տարւոյ Մարտ 1էն (թ.1) կամ անկէ ետքը բաժանորդագրուած են Մա-սիսին, ամբողջովին պիտի ստանան 52 թիւ: Այլ տարեկան, Այս առթիւ կը խնդ-րենք հին կամ նոր բաժանորդագրութենէ հաշիւ ունեցող մեր յարգելի ընթերցողներէն որ հաճին կարգադրել զայն, իրենց պարտքը եղող բաժանորդագրութեան համետ գու-մարը հասցնելով իմբագրութեանս:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻԶՅԱՆ
Տէր եւ Տնօրէն—ՏՈՔԹ. ԵԴՈՒԱՐԻ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼՔ Օրագրի

ԱՐԱՆԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ

Ի Զ Մ Ի Տ

Կրտսեմնե

Հոգեկի եւ ծ. վ. ին ապահովագրութիւններ՝ շահուեալ պայմաններով:
Այն ահապի գոյիւնի գումարներ, ներառեալ, որոշուած եւ մօքային գործողութիւններ:
Եւրոպական առաջնակարգ գործարաններու միջոցաւ՝ գումար եւ պարզ պատկերաւ:
Զորդ քաւթ—բաւթութիւն պարտաւթիւն, Զօրօկրաքն համեմատ:

Կր հայրա՛քե

«Թ. մաւ Սթրա՛տը Անգլ. Տաւ դրամարկներէն:

Սաքսոնի, առաջնակարգ բիւսնոնէ՝ շարթական վճարումներով:

Այնովերլին դրութեամբ պիտի լինեն:

Այն ահապի երթագործ-կան եւ թիթեղագործի մեքենաներ:

Ուղղած քանակութեամբ եւ ահապի վճար եւ հաշուեալ թիւեր:

Գումարային լոնձ-արարութիւններ փութով կը կատարուին:

6-10

Հասցէ՝

ԱՐԱՆԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ Ի ԿՈՒՄ

PHOENIX ASSURANCE Ld. Co.

“Փ Ի Ն Ի Ք Ս”



ՀԻՄՆԵՍԱԼ Ի ԼՈՆԾՈՆ 1782 ԻՆ

ՆԸ ԳՈՐԾԷ Ի ՊՈԼԻՍ 1869ԷՆ Ի ՎԵՐ

ՈՆԳԼ. ԿՊՈԶՈՎՈՂՈՒԿԱԼՆ ԸՆԿ.

Դրամագլուխ եւ պահեստի դրամ

Լնգլ. ոսկի 4,218,000

Ֆիւնիս ասի կրդեկի դէմ Ապահ.

վազրահան Ընկերութիւն մըն է, ծանօթ
իր պատուաւորութեամբ եւ փնտռուց մէջ
իր անմիջական վճարումներով:

Ֆիւնիս Կ'ապահովագրէ կրդեկի եւ
կամակի դէմ ոմէն ահապի անարժեք եւ
շարժուն ստացուածք, յայտ նպատակաւ
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ

ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՎՆԱՍՈՒՑ. Ցա՛ղ վճա-
րած է առաւել քան 27,000,000 անգլ.
անգլ.:

Ընդէ. գործակալ Պալտո, եւ գաւա-
ւաց:

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
Վերալիս խան, Պանֆ Օրօմանի մօտ
Ղալաթիա:

Փոխ գործակալ Ի Պալտո

ՃԻՎԱՆ ԹԷՔԷՆԱՆ

8-10

Ֆինգլիան խան

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՌԵՐԱ, ՄԵՐ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սերայի Լիսէին դէմ

Գե. Նե. Շբ. օրերը առաւօտեան կանուշ

խեն մինչեւ իրիկուան ժ. 11½

Բե. Դե. Ուր. օրերը 6 կն մինչեւ 11½

Կերակի օրերը ժամադրութեամբ 8-10



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԻՆԸ. ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՐԿԱՄԲ

1881 մարտ 20ի կայս. Ուքադով արտոնուած

կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութեան կ'ընդունի, ՀՐԻՆԸ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ. ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄԵՐՈՒ ԴԷՄ.

ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ կատարելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան դումար աւելի քան 149,852,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամագլուխ եւ վնասուց հատուցում 355,840,000 »


1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս 64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել կ. Պոլսոյ մասնաճիւղին. Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա. 8-10

ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Հէրճալի վաճառուներ՝ գովարդէններու, տոկի եւ անոթ չգրաններու, քաղաքի պատի եւ քոնսոյի ժառանգներու մասնաւոր վաճառութեան գործ. իր ազդեցութիւնը խորհրդներուն վաճառութեան քաղաքներու մասնաւոր կրօնական, լայնատեսիլ թէ մէն եղանակի յատուկ շին նախաձեռնութեան վրա պատշաճ աւելի ապահովութեան եւ ազգայն կաւորութեան վրա: Անոց, ինքնաշարժի, ու անձնակի նախաձեռնութեան վրա: Մաշակար վաճառութեան, նաեւ ճերմակեղէն, ֆաթեղեղներ եւ Թոսֆիէներու աւազակեղէն ճոյհներու: Ունի նաեւ կահուածքի ձեւերուն լաւատեսիլ, մանկականներ, երազական ու ազգական գործեր, գեղեցիկ մաշակութեան, կրօնականներ, արհեստական, անհատական կատարելութեան թիւններով:

Հէրճալի վաճառատուներ իրանի անպէս աւազակեղէն, յանձն է կատարութեան վաճառութիւնը եւ գովարդականութիւնը իր ապահովութեան, անհատական եւ անհատական մաքրութեան, ձեւաւորութեան եւ աւազակեղէն կատար:

Այս ախտներն արդեաւ արժէքին վաճառումն է

Մ. Պ. Մ. Ռ. Ի. Ս.

Միայն թէ դնուած ապահովութեան կարելիք 20րդ հազարի, իսկ 30 հազար գովարդի համար շաբաթական կարելիք 5 վճարման պատշաճ է հաշիւութել:

Վաճառատունը հաստատուած է

ՄԵՄ-ՇՈՒԿԱՅ. ՈՍԿԵՐՁՂՑ ՄԵՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է հաւաքակալ համայնութեան: Հէրճալի անհատական կողմերէն պատշաճ մը ի վիճակի է ապահովութեան, իսկ մէկէն դժուարութեան լաճաւորները:

Կանխիկ գնողներու ցամաք հաշիւներ 5 զեղչ:

Սակարկութիւն չկայ:

Շաբաթական վճարմանը համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

ՆԱԶԱՐԷԹ ԽԱՉԻՐԵԱՆ

ՓԱՍՏԱՐԱՆ

Պոլիս, Մարբունքլար, Պարնաբան խան
Թիւ 26

Ամէն կարգի դատեր կը ստանանք եւ
խնդրոյ առարկայ եղած գործերու համար
թէ՛ բերանայի եւ թէ՛ թղթակցութեամբ
բանակցութիւններ կը կատարէ եւ կարծիք
կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ
դատերու եւ առեւտրական ու աշխարհային
պայմանագրութեանց վերաբերող թուղթեր.
Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր ձգտա-
քաւ խորհրդակցութիւն կը կատարէ եւ կար-
ծիք կը յայտնէ:

Ապահովագրական գործառնութիւններու
եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական
ընկերութեանց նկատմամբ տնհրաժեշտ եղող
տեղեկութիւնները ձգտաքաւ կուտայ:

Կը լուծեմք որ մինչեւ օր այս մասին կա-
րեւոր եղած տեղեկութիւնները իրմէ չտանց-
ուին, ապահովագրութիւն չի տարագրուի.
Ապահովագրական վստահ հասցեման գու-
մարներու եւ փոխարժէքներու գանձում.
Եւ կը ստանանք:

5—10

ԴԵՐՁԱԿ

ՎԻՉԵՆ ԱԼԱՃԱՆԱՆ

Ղալաթիա, Հարանքը փողոց թիւ 13

Լու ահաւի կեպտաներով ու ձեւաւոր
կազմաւոր աշխատակցի աւել 20 զօրներ. ու
բոնք միանգամայն ժողովրդին կը փաշ-
տեն եւ վճ ըման զիւրիկն պայմաններ, կը
հան զիմեկ այս նոր բողոքած խանութք, եւ
մեծապէս գահ պիտի մնան:

5—10

ԱՆԳՂԻԵՐԵՆԷ-ՆԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ԲՐՕՓ. Վ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆԻ

Ստիւաւթիւ օրինակներ մնայած են եւ կը ծախս ին 6. Մասթէտեան թղթով ծած-
ուանքը

Ֆինանսըլար, Ամերիգոն խան թիւ 27 Կ. Պոլիս
Գիւն 60 դրո.

Գուտաւոր համար 64 զրչ. բոթաթի ծախքով

5—10



Անկարելի է որ ընտանիք մը անանց կտրի մեքենայի մնայ, քայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդէռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ ըովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Հնկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐՔԱՅԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէոյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՐՏԱՐ

Զարչը Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կասաբեալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր ֆաղաֆերուն մէջ:

Սինկերի Հնկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզդուրի տունը:

8-10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ. ԹԱԿՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ շատ, մասնագիտօրէն եւ երկար տարիներէ ի վեր կը դարձանէ ստամոքսի, աղեաց, միզային ճանրաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին եւ նոր դա. ղիկոն տեւերը: Այս վերջին տեւերը՝ առանց ստամոքսի խանգարման եւ նորադոյն մեթասներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վէլլը: Զօրեցիւրթի օրերը միայն ձեր: 7-10

Ա.ԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Արանց եւ կանանց ճշգրիտօրէն հոգ. տնայնութիւն, Պոլիս, Սուլթան-Համամ, Մի. Երկր Դրամատան դէմ Թիւ 58:

Սոյն վաճառատան մէջ գտնուած ագ. բանքները, արանց ու կանանց յառաւիկ կ. վանդակներ, իրենց գէղեցկութեան կը միաց. ան տակուսութիւն, եւ դիւրամատչելի գէ. ներու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հա. տ. բազմութեան:

Ադամ վարդեան մեծազէն գոյ թղու. ցած է եր բազմութիւ յաճախողները: 8-10